Օգնական բժիշկների թիւը եղել է 60,3 %-ով աւելի նախընթաց տարուանից։ Բացի դորանից՝

| | |
|---|---|
| Օգնական - բժշկուհի (фельдшерица) | 1 |
| Մանկաբարձուհիներ . . . | 21 |
| Ատամնաբոյժեր . . . | 3 |
| Ծաղկահատներ . . . | 36 |

---

## ՀԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐ

Բագուի նահանգի հիւանդ ազգաբնակութեան (բնակիչներ) օգնելու հոգատարութիւնը, հասարակական հիմնարկութիւններ չլինելու պատճառով, ընկած է գլխաւորապէս կառավարութեան վրայ. միայն Բագու քաղաքում պահվում է մի հիւանդանոց քաղաքի հաշուով։

Բագուայ նահանգի բժշկական հիմնարկութիւնների ընդհանուր թիւը ներկայ տարում չի փոխուել, միայն մինչեւ վերջին ժամանակները Բօժիյ — Պրօմիսլում գոյութիւն ունեցող հիւանդանոցը փոխադրուել է այն ձկնորսատեղիները, որ գտնվում է Կուր գետի հիւսիս — արեւելեան բանկի մօտ։

Նահանգում գոյութիւն ունեցող բժշկական հիմնարկութիւնները, գտնուած տեղերի համեմատ, բաժանվում են հետեւեալ կարգով՝

| | Հիւանդանոցների թիւը | Մահճակալների թիւը |
|---|---|---|
| Բագու քաղաքում | 4 | 208 |
| Բագուայ գաւառում | 2 | 40 |
| Ղուբայ քաղաքում հիւանդ. բժիշկ բանդում | 1 | 24 |
| Քիւրդամիր գիւղում Շամախու գաւառ. | 1 | 4 |
| Պրիշիբում, Լէնքօրանի գաւառ. | 1 | 4 |
| Գեօկչայ աւանում | 1 | 4 |
| Սալիան աւանում | 1 | 4 |
| | 11 | 288 |